

ՀԱՅՐԵՆՆԱԿԱՆՔ

Հ Ն Ջ Ո Ւ Ո Ր Ն Ե Ր

Հորիզոնից մինչ հորիզոն ծովի նրման արտը ոսկի,
Այլքուում է արևի տակ մէկ հեզանազ, մէկ փոթորկուն,
Ու կարծես թէ հրդեհում է հուր շողերից արեզակի,
Բայց ծփում է, տատանում է, հուրհուրում է՝ չի բըռնկում:

Գերանդիններն են շողշողում արևի տակ իբր ասուպներ,
Ու զայիս են հնծուորները կանգնում ահա արտի եզրին,
Նրանց առջեւ քիստերը բոց, հասկերն ինչպէս վառուող ջահեր
Տատանում են, հուրհրում են, զարնում են լայն կրծքերին:

Գերանդիններն են շառաչում, հասկերն են լուռ փուում լաս-լաս,
Աղջիկներն են փոցխում զուարթ, խուրձեր կապում արեւակէզ,
Քրտինքը թուխ ճակատներին փայլփլում է ինչպէս ալմաս,
Եւ հնծում են, եւ փոցխում են, եւ հալում է արտը կարծես:

Դղրղում է կոմբայնն հեռում հորիզոնի վըրայ դեղին,
Ու ժպտում է, նայում արտին, այն թուխ տղան մեքենավար,
Սիրոյ բնբուշ երգը խառնած իր գործիքի դղրղիւնին,
Նա երգում է, նա հնծում է իր դէմ փռուած արտը վարար:

Արեւն հանդարտ թեքում է ցած, ժպտում յոգնած հնծուորներին,
Որոնց հուժկու, լայն ուսերին գերանդիններն են շողշողում,
Հնծած արտի խոզանները թողած հեռում ոսկեդեղին,
Յոգնած քայլում, շտապում են, նրանք արդէն դառնում են տուն:

Գիւղը հեռում իրիկնային մշուշի մէջ ծայնով անուշ,
Կարօտ մօր պէս աչքը ճամբին նրանց արդէն կանչում է տուն,
Եւ իջնում է արեզակի ցուքերի հետ ոսկեմշուշ,
Հորիզոնից մինչ հորիզոն խաղաղութիւն, խաղաղութիւն:

ՌՈՉԱ. ՊԵՏՐՈՍԵԱՆ

**

Մայր իմ, մի մազդ էլ սպիտակելիս՝
Իմ սրտի բոլոր լարերն են լալիս:

Թէեւ սրդի չես կուում կորցրել,
Բայց կորածներն են զլիսիդ ծիւն դրել:

Աշխարհից ուրիշ ոչինչ չես ուզում՝
Նոր ծիւն չդնի մագերին բո ծիւն:

ՅՈՎ. Հ. ՇԻՐԱԶ